

Ծ Ի Ա Ծ Ա Ն

ԱՆԳՂԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԷՆ ՄԷԿՈՒՆ ՎՐԱՅ ՊԱՏԱՀԱԾ ՆՈՐ ՓՈՐՁԱՆԻՐԸ

Հաշիւ եղած ու շատ անգամ ըսուած է որ հասարակ կառքերէն պատահած փորձանքներով շատ աւելի մարդ մեռած է մինչեւ ցայժմ քան թէ շոգեկառքերէն՝ երկաթուղիներուն վրայ. այսու ամենայնիւ աւելի սոսկում կ'ուզայ մարդուս վրայ՝ երբոր շոգեկառքերուն մէջ եղած փորձանքի մը պատմութիւնը կ'կարդայ: Այսպիսի սոսկալի փորձանքներէն մէկն ալ պատահեր է օգոստոսի 22-ին (սեպտ. 3) Լոնտոնի մօտ եղած երկաթուղիներէն մէկուն վրայ:

Քէնթիշ-Թաւն ըսուած կայարանին մօտ ճանապարհը 40 կամ 50 ոտնաչափ գետնին երեսէն բարձր է. անոր մօտ ալ գրեթէ նոյն բարձրութեամբ կամուրջ մը կայ, եւ շոգեկառքը վրայէն կանցնի: Այն բարձրութեան վրայ աւազ կրող շոգեկառքերու շարք մը ճամբայ բրած ատենը՝ յանկարծակի ահա-

գին սաստկութեամբ կհասնի ետեւէն ուրիշ շոգեկառքերու շարք մը՝ ճամբորդներով, եւ սարսափելի շառաչմամբ կզարնուի աւջեւինին հետ: ճամբորդներուն շոգեգործին կյարձակի աւազ տանող կառքերուն վրայ: Խսկոյն կարբորէ փոշի կզարձընէ զանոնք, ճամբէն դուրս կցատքէ ու կգլորի կիյնայ վար: Կառքերէն չորսը շոգեգործիին հետ մէկտեղ կերթան կզարնուին կամուրջին պատերուն ու կտոր կտոր կլինին. անոնց մէջի խեղճ ճամբորդները՝ հարիւր հոգիի չափ՝ գրեթէ ամէնքը կմեռնին կամ կխամեռ կը վիրաւորուին: ուրիշներն ալ չարաչար կը վնասուին, եւ մեռնողներուն՝ արանց, կանանց եւ տղայոց ազազակը շոգեգործիին ֆշալու որոտալու ձայներուն հետ խառնուած՝ սոսկալի տեսարան մը կձեւացընեն, ատենն ալ իրիկունը մութ լինելով՝ աւելի սարսափ կձըգէ եղեր տեսողաց վրայ:



Ն Ո Ր Ա Տ Ի Պ Գ Ի Ր Ք

ԵՂԻՇԷՒ ՍՐՔՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԳԱՆԱՆՅ

ԸՍՏ ԱՆՁԵՒԱՅԵԱՅՆ ՕՐԻՆԱԿԻ.

Մեր ընտիր մատենագրաց մէջ գրեթէ մէկն ալ չկայ որ եղիշէին պատմութեանը պէս ծայրէ ծայր յստակ եւ գեղեցիկ չհայկաբանութեամբ եւ զարգարուն սճով գրուած լինելով, դպրոցի աշակերտաց ձեռքը տրուի համարձակ՝ իբրեւ օրինակ հայերէն շարագրութեան եւ մատենագրութեան. [այն պատճառաւ ալ շատ տեղ ու շատ անգամ տպագրուած է: Այս մեր տպագրութիւնն եղած է այն ընտիր օրինակին վրայէն որ «Ատումայ Անձեւացեաց Տեառն» համար գրուած է եղեր եօթներորդ կամ ութերորդ գարուն: Ըսել է թէ մինչեւ ցայժմ գանուած օրինակներուն ամենէն հինն ու պատուականագոյնն է:

Գինն է 50 քոփեք, կամ 2 ֆրանք:

